



63. ՆՈՅԵՄՁԱՐԻ ՀԵՔԻԱԹԸ

Հըլնում ա, չի հըլնում, մե թաքավոր ա հըլնում: Էս թաքավորն ուներ իրեք ախճիկ ու մե տղա: Տղեն՝ մե յան, էս իրեք ախճիկը՝ մե յան: Հըմա էս թաքավորը կնիկ չուներ, ծեր էր, ամչնում էր, որ կնիկ բերա: Մեկ էլ մտածում էր, որ կարիք չըկա, որ տան մեչը խորթու-թյուն քցա: Ոորթ մերը ախճիկների հետը յոյա չի էթա: Էս թաքա-վորի մեծ ախճկա անունն էր Սիմիզար, միչնեկինը՝ Գյուլիզար, իսկ պատիկինը՝ Նոյեմզար, տղի անունը՝ Բալթազար:

Ինչ Սիմիզարն ու Գյուլիզարն ին, սաղ օրը կայնում ին արծաթե խնայու հառեչը, հիրանց մագերն ին սղալում, օրական տասը ջուռա չոր փոխում, աչկներին սուրմա քշում, որ խորոտ էրևան: Արև ժա-մանակ էլ դուս չին գալում, որ արևից չըսենան: Բանը-գործի խետ էլ գլոխ չունին: Ո՛րչ կարթալ, ո՛րչ մանել, ո՛րչ ձեռագործ անել: Ակուշկի մոտը նստում, էթող-գալողին թամաչա ին անում, քյա-սիբ-քյուսուրի վրեն ծծաղում:

Հըմա Նոյեմզարը քույրերին նման չէր: Ընդոնցից խորոտ ու չնորքով էլ էր, հիրա խորոտությունով չէր տարվում: Մե հրոպե պարապ չէր նստում: Գիրք էր կարթում, թել էր մանում, թաթ էր գործում, բուրթ էր գզում:

Ոնց որ գեղացու ախճիկ, հեչ նման չէր թաքավորի ախճկա: Էնենց ձեռագործ էր անում, ասես ըսկ ըստրան մատ չի դիրե, երգնքից ա հընգե: Քուրերը վրեն ծծաղում ին:

—Ախճի՛ Նոյե, —ասում էր մեծ քուրը, —թաթ ես գործո՞ւմ, թե՞ չորաբ:

—Չարոխ ա կարում, —ասում էր միչնեկը:

—Նոյե՛, կովը կթե՞լ ես, գնա կովը կթա՛, —ասում էր Սիմիզարը ու հետը ծծաղում:

—Ո՞նց էթա կովը կթելու, հըլա կիսուրի գլոխն էլ քթիվ չի արել, քթվել ա պետք, —ծծաղում էր Գյուլիզարը:

Նոյեմզարը ըստոնցը չէր պատասխանում, ոնց որ չունը հաչա, յա թե հուխտավորի էչը զուա, ուշադրություն չէր դարցնում:

—Հողս գլխի՛տ, գեղացի՛, լայեղ չի անում, որ խոսա, —ասում էր Սիմիզարը ու մրճիկ տալիս:

—Գիդա՞ս, Սիմիզա՛ր, մարթը մաճկալ ա, գութանի տերն ա, —ասում էր Գյուլիզարը: Բա մաճկալի կնիկը թաքավորի ախճ-կա հետը լայեղ կանի՞ր խոսա:

Ախճիկներն իրեքն էլ հասեր ին, մարթի տալու ժամանակն էր: Թաքավորը մտածեց կանչա, հետները խոսա, տենա՝ գլխների մեջը բան կա՞, թե՞ չէ:

Կանչեց հիրա մոտը ու հարցուց. —Ախճիկներ՛ր, տուն դնողը մա՞րթն ա, թե՞ կնիկը:

—Վա՛յ, հայրի՛կ, հայրի՛կ, —ասին Սիմիզարն ու Գյուլիզարը:

Մարթն ա տուն դնողն էլ, տուն չինողն էլ, քանդողն էլ: Մարթն ա բերում, տունը լցում, հըլա մե բան էլ դեսը-դենը ցխում, որ տե-նան՝ հինքը ինչքան հարուստ ա:

—Տուն դնողը, չինողն ու քանդողը կնիկն ա, —ասավ Նոյեմ-զարը, —կնիկը որ տնարար չըհընի, թող հա մարթը բերա լցա, մե կոպեկի տեղ էլ ա, չի էթա:

Թաքավորը շատ զարմացավ, որ հիրա հավանած ու սիրած ախճիկը՝ Նոյեմզարը, անխելք ա:

Տխրեց, նիւթը կախեց, հետո աչկերը խորեց Նոյեմզարի վրեն ու ասավ. —Ափսոս, որ էսքան տարի քեզի հաց եմ տվե, չոր եմ առե, հուսումի տվե: Սիմիզարիս ու Գյուլիզարիս էնենց մարթի տամ, որ հարստության մեջը լողան, քեզիկ էլ էնենց մարթի տամ, որ օրական խացի կարոտ մնաս, որ տուն դնես, ես տենամ:

—Քո իրավունքն ա, հայրի՛կ ջան, ոնց ուզում ես, արա՛, —ասավ Նոյեմզարը, —հերը ինչ որ ասա, զավակի համար օրենք ա, հերը զավակի վատը չի ցանգանա:

Միյուս օրը թաքավորը հայդարարեց, որ ախճիկները խասեր են, մարթի ա տալում, թե ուզող կա, թո գան, հիրանց պատվով, պաշտոնով ու կոչումով չարվեն:

Թաքավորի պալատի հառեչը լինքը լցվան: Ասեղ քցելու տեղ էլ չըկար: Շարքով կայներ ին վազիրի, վաքիլի, իշխանների տղերքը: Ասեմ, որ բոլորն էլ աչկին դրիլ Նոյեմզարին, որ Նոյեմզարին առ-նեն:

Որ տեսավ շատ ժողովուրթ ա հավաքվե, թաքավորն ասավ. —էս տեսակ հարց կա, ժողովո՛ւրթ: Ախճիկներիս հարցրել եմ, թե տուն դնողը տղամարթն ա՞, թե՞ կնիկը, Սիմիզարս ու Գյուլիզարս ասել են, որ տուն դնողը տղամարթն ա, հըմա էս անխելքը՝ Նոյեմ-զարը, ասում ա, որ տուն դնողը կնիկն ա: Հիմի ես որոշել եմ, որ

Նոյեմբարին տամ մե ակակատ, գոթի, թամբալ տղի: Էտի վերչում, իսկ Հիմի ո՞վ ա ուզում Սիմիզարիս:

Վազիրի տղեն տեսավ, որ Նոյեմբարին չեն տալու, ասավ, որ Հինքը Սիմիզարին ա ուզում, թե Սիմիզարը ուզա:

—Ես ուզում եմ,—ձեն տվեց Սիմիզարը,—վազիրի տղից լա՞վ տղի պտի առնեմ, իմ ուզածն ա:

—Տվեցի,—ասավ թաքավորը:

—Ո՞վ ա ուզում Գյուլիզարին,—ասավ թաքավորը:

—Ես եմ ուզում, թաքավո՛ր,—ասավ նազիրի տղեն:

—Գյուլիզա՛ր, դու ուզո՞ւմ ես նազիրի տղին,—ասավ թաքավորը:

—Ուզում եմ, Հայրի՛կ, ուզում եմ,—ասավ Գյուլիզարը:

—Տվեցի,—ասավ թաքավորը,—թող փեսեքս առնեն Հիրանց նշանածներին, էթան պալատը:

—Դե, զինվորնե՛ր,—ասավ թաքավորը,—գնացե՛ք քաղաքը, բոլոր տներն ստուգե՛ք, քաղաքի ամենաթամբալ, գոթի, մագեթոտ տղին կրբերեք, իսկ մինչև էտ, Հենց էստեղ ստոլներ բացե՛ք, թո ժողովուրթը քեֆ անա:

Էտ ժամանակ մե պառավ էկավ թաքավորի մոտը, ասավ.—Թաքավո՛րն ապրած կենա, իրավունք կրտա՞ք խոսամ:

—Ասա՛, պառա՛վ, ի՞նչ ես ուզում, խնթիրքտ կրկատարեմ:

—Թաքավո՛րն ապրած կենա,—ասավ պառավը,—ես խնթիրք չունեմ, Հրմա Նոյեմբարը ճիշտ պատասխան ա տվե: Տոն դնողն ու քանդողը կնիկն ա: Ափսոս, որ իմ տղեն Հիվանդոտ ա, թե չէ Նոյեմբարին ես կըտանի, կըդառնար իմ տան ճրաքը:

Էտ խոսակցության ժամանակ զինվորները պառավի տղի թևերից քաշելով բերին:

—Թաքավո՛ր, քաղաքում էս տղից էլ անպետք տղա չըկա,—ասին,—25 տարեկան ա, պարկեր ա թունդրա չուրթը նռում ա: Ասում ենք՝ Հելի՛ վեր, թաքավորը ակնհիկը քեզի ա տալում, իսկի տեղից էլ չի ժաժվըմ, հերեսներիս ա հիշկըմ:

—Ժողովո՛ւրթ,—ասավ թաքավորը,—Նոյեմբարին տալիս եմ էս տղին, թո էթա տուն դնա:

—Պառա՛վ, վերցո՛ւ Հարստ գնա:

Թաքավորի ակնհիկը Հրնգավ կիսուրի ու մարթի թևը, գնաց: Շատ իշխանների տղերք ակն քաշին, Հրմա ի՞նչ անեն, թաքավորի հրաման ա:

Որ էկան տուն, մերն ասավ.—Թաքավորի՛ ակնհիկ, Նոյեմբա՛ր, քո ոտի Հողն ես դառնամ, ակսր դու մեր լայեղին չես:

Նոյեմբարն ասավ.—Մայրի՛կ ջան, մի՛ նեղացի: Իմ բախտը քո տղեն ա, ես էնենց կանեմ, որ ձեզի դուր գամ, ես քո տղին հավան եմ:

—Ախր, ա՛յ բալա, ո՞նց ես հավան, թամբալի մեկն ա, ես եմ ըտու պախողը, դու մեխկ ես: Մենք էլ, տենո՞ւմ ես, հե՛չ բան չու-նենք, ո՞նց պտի թաքավորի ախճկա ջաբրը քաշենք:

—Մայրի՛կ, դու է՛ն ասա, ընձի հավա՞ն ես,—ասավ ախճիկը:

—Բա էտի ասելու խոսք ա, քո նման չինար բոյով թաքավորի ախճկան էլ չըհավանե՞մ: Ես քո ոտնամանի փոշին դառնամ, արի տուն, նստի՛: Տենամ՝ խավն ածեր ա, բերեմ էփեմ, ձո՛ւ կեր, անոթի ես:

—Ձէ՛, մայրի՛կ, սոված չեմ: Հերս օժիտ էլ չըտովեց, բան չըկա, ես քիչ փող ունեմ: Դու ու տղետ վերցրեք գնացե՛ք բազարը, իրեք ձեռք լավ խաս տեղաչոր առե՛ք, ուտելի՛ք առեք, տվե՛ք համբալ-ների շըլակը, թող բերեն: Դուք էլ գացե՛ք բաղնիքը, լա՛վ լողացեք, չորներտ փոխե՛ք, էտ հները թափե՛ք, նորերը հագեք էկե՛ք:

Տղին էլ ասավ, որ էթա դալլաքի մոտ թրաչվի, մագերը խուզել տա: Ըստոնք հիրկվա յանը տուն էկան, հըմմեն ինչ էնենց արած, ոնց որ թաքավորի ախճիկն էր ասել: Մինչև ըստոնց գալը թաքա-վորի ախճիկը հարևանների իրեք-չորս ախճիկ կանչեց, փող տվեց, տունը պատ-հառիք արին, լավ մաքրին, գացին: Որ տեղաչորը բե-րին ու տեսան, զարմացան:

Էսքան բան կատարեր ին, հըլա թաքավորի ախճիկը մարթի անունը չէր հիմանում:

Կիսուրին խառցուց.—Մայրի՛կ, տղիտ անունն ի՞նչ ա:

—Գարսո ա, բալա՛ ջան:

Նստան խաց կերան, մուլթն հընգավ: Թաքավորի ախճիկն հե-լավ, որ ճրաքը վառա, ո՛չ ճրաք, ո՛չ լուս:

Մարթին փող տվեց, ասավ.—Գարսո՛, գնա՛, քանի խանութնե-րը չեն փակել մե քանի լավ մո՛մ առ, բե՛ր:

Գարսոն վազավ մոմի:

Մերը ծծղաց, թաքավորի ախճիկը տեսավ:

—Հընչե՞ս ծծաղում, մայրի՛կ:

—Քա ի՞նչ անեմ, բալա՛, էն թամբալ գոթին ոնց ա վազնում:

—Դու էլ որ թաքավորի կնիկ դառնաս, կըջահեղանաս, մայրի՛կ, ախր տղետ թաքավորի փեսա ա:

—Աստված քո ձենը լսա, բալա՛,—ասավ պառավը:

Թաքավորի ախճիկը ժպտաց, մտքի մեջն ասավ. «Պառավի մտկին կա մարթի էթա, էն էլ թաքավորի»:

Գարսոն մոմերը բերեց: Իրեք մոմ վառին, տունը լուսավորվավ: Նստան խոսացին: Էկավ քնելու ժամանակը, հելան քնան: Պառա-

վը պարկած տեղը մտածում էր. «Թաքավորի ախճիկը ախկատ գոթուն կառնի, թաքավորը հընչի՞ պտի ընձի չառնի»:

Լուսը որ բացվավ, Նոյեմզարն ասավ.—Մայրի՛կ, պարապ-սարապ նստելով, բան դուս չի գա: Բուրթ առնենք, թել մանենք, ես թաթ գործեմ, կըծախենք, կապրենք:

—Թաքավորի՛ ախճիկ, ոնց ասում ես, էսենց անենք, հո գոթի չեմ, հըլա ջահել եմ, փարք Աստծու, կաշխատեմ, կըմանեմ:

—Դե վերցրեք փողը դու ու Գարսոն, գնացեք բազարը: Բուրթ կառնեք: Հիմացեք ամենալավ, լվացուկ, զգուկ, ծերք բուրթ: Կէ-թաք բազարի վիրևի կողմը, կըհարցնենք, թե ով ա բուրթ ծախող իփոն: Որ հիրանը գթնեք, կասեք, որ Նոյեմզարի հղրկածն ենք, Նոյեմզարը բուրթ ա ուզում, էրկու փուտ կառնեք, կըտաք համբալի չալակը, կըբերեք:

Բերեցին: Ի՞նչ բուրթ, ոնց որ նոր էկուկ ձուն: Ուարս ու կիսուր սկսին մանել, ետո խարսը թաթ էր գործում, կիսուրը մանում էր:

Որ 20 ջուխտ գործեց, տվեց Գարսոյին, ասավ.—Գարսո՛, կըտանես բազարը, ջուխտը 10 ոսկուց պակաս չըտաս: Սկզբից կըզարմանան, ետ կըկայնեն, հըմա ետո աղաչելով կըտանեն: Իմ գործած թաթերի գինը ես եմ հիմանում:

Էսենց օրական գործածը Գարսոն տանում ծախում էր: Մե տարվա մեջը մե քանի հազար մանեթի թաթ ծախին: Զմեռը որ սկսվավ, թաթման էլ էր գործում:

Ուարարը գնաց թաքավորին, վազիրին, վաքիլին խասավ, թե՛ չեք ասի, էսենց զարմանալի նախշերով չոլկի նման փափուկ թաթ են ծախում:

Մեկէլ օրը թաքավորը, վազիրը, վաքիլը մարթ հղրկին բազարը, հըմա էն ժամանակ էկան, որ ծախել վերչացրել էր:

Գարսոյին զգուշացրին.—Տե՛ս, եթե հէքուց ծախել ես, վա՛յ քեզ, մեզի 30 ջուխտ պետք ա, թաքավորի հրաման ա:

Գարսոն ասավ.—Ա՛յ մարթիք, ի՞նչ անեմ, որ թաքավորի հրաման ա, ես մե կնիկ ունեմ, հո 30 կնիկ չունեմ, որ 30 ջուխտ գործա: 15 օր ետո թաքավորի հրամանը կըկատարեմ, իսկ եթե վռազը պետք ա, հէքուց էրկու ջուխտ կըբերեմ:

—Լա՛վ, կնգատ ասա՛, թո հսօր չըքնի, իրեք ջուխտ գործա, մացածը 15 օր ետո:

Համաձայնվան ու գացին տները:

Գարսոն էկավ, Նոյեմզարին պատմեց.—Լա՛վ, Գարսո՛ ջան, որ խոսք ես տվեմ, գիշերը-ցերեկը մեկ կանեմ, կըհասցնեմ, մի՛ մտածա:

Նշանակած օրը Գարսոն թաթերը լցեց մե չոլկովի չալի մեջ, քցեց թեն ու գնաց: Թաքավորի հղրկած մարթիք սպասում ին,

ջուխտը 15 ոսկի վերցին ու գացին: Որ տարան, վագիրի ու նագիրի խարսները տեսան, ճանչցան, Հրմա չասին, որ Հիրանց քուրն ա գործել, առանց էն էլ Հիրանց մարթերի աչկն էլ պըստի քվոր վրեն էր, որ էտ էլ ասին, հավելի վատ:

Մե օր էլ թաքավորի ակնհիկը Գարսոյին ասավ. — Գարսո՛ ջան, վերցրո՛ւ էս 30 ոսկին, գնա՛, քաղաք կէթաս, բաղնիք կէթաս, բազար կէթաս, քո գործն ա, էս 30 ոսկին կըծախսես քո խելքը կտրածով: Ուզում ես՝ տար չպրտա՛ փողոցը, ուզում ես՝ տար քե՛ֆ արա, ուզում ես՝ մե բա՛ն առ, մե խոսքով, քեզնից հաշիվ պահանջող չըկա: Հրմա քեզանից խնթրում եմ, որ գաս, դուզը ասես, թե փողն ինչ ես արել, մե կոպեկ ետ չըբերես: Ես ուզում եմ հիմանալ, թե ծախսել կանո՞ւմ ես, թե չէ: Գարսո՛ ջան, մինչև հիմի իմ խելքով ենք շարժվել, ըստուց ետո քո խելքով էլ պտի շարժվենք, ակսր իմ գլխի տերն էլ, տանտերն էլ դու ես: Ես էլ, տենում ես (նշանց տվեց փորը), կարող ա մե ամա չըկանամ աշխատել, դու ծախսա՛, սովորի՛: Դե, Գարսո՛ ջան, գնա՛: Էս իրեք ոսկին էլ ջոկ տեղ դի՛ր, մայրիկի համար չալ կառնես:

Գարսոն ոսկիքը վերցուց, գնաց բազարը: Դես ման էկավ, դեն ման էկավ, տեսավ՝ մե բիձա ա նստե, հառեչը՝ իրեք կոլոն խող:

Ասում ա. — Խելք եմ ծախում, կոլոնը 10 ոսկի, առնողը գիդա, չառնողն ի՞նչ հիմանա:

Մարթիք գալում են, հիչկում, ծծողում են:

— Ա՛յ ժողովուրթ, էս բիձեն խելքը թոցրեր ա, մե կոլոն խողը 10 ոսկի ա ասում, — մե անքամ ասավ մեկը, — ա՛յ բիձա, սելը բե՛ր, քեզի մե սել խող տամ:

— Առնողը գիդա, չառնողն ի՞նչ հիմանա, — ասավ բիձեն:

Գասպարը թամաչա էր անում ու մտածեց. «Մո կոլոնն առնեմ, մեկ ա, փողն իմ իրավունքին ա» ու ասավ. — Բիձա՛, ա՛ռ 10 ոսկին, մե կոլոնը բա՛ց:

10 ոսկին բիձեն առավ, կոլոնի մեչից մե թուխտ խանեց, տվեց Գարսոյին, ասավ՝ կարթա: Գարսոն ասավ, որ Հինքը կարթալ չի հիմանում:

Բիձեն կարթաց. «Դու պտի աշխատես, որդեղ աշխատես, ձեռտ մաքո՛ւր պախա, հավաղարի՛մ աշխատա, պատիվտ չըբքես»:

— Էս ա իմ կոլոնի խրատը, կըկատարես՝ կատարա, չես կատարի՛ դո՛ւ գիդա, — ասավ բիձեն:

Գարսոն մտածեց, մտածեց, ձեռը տարավ ջեբը, 10 ոսկի խանեց, տվեց բիձին, ասավ. — Մեկէլ կոլոնը բա՛ց արա, բիձա՛:

Բիձեն բացեց մեկէլ կոլոնը, թուխտը վերցուց, սկսեց կարթալ. «Հիրկունը հուր որ խասնես, կըմնաս, արեւը մտնելուց ետո, տեղիցտ չըշարժվես»:

Մնացած 10 ոսկին տվեց, ասավ. «Բիձա՛, մնացած կոլոնն էլ բա՛ց»:

Բիձեն բացեց, կարթաց. «Նեղի հըլնես, լենի հըլնես, Աստուստեղծածին անուն չըղնես, չասես՝ վատ ա»:

Տղեն խրատները միտը պախեց, գնաց մորը շալ առավ, էկավ տունը: Կնիկը հելավ հառնչը:

— Գարսո՛ ջան, ասա տենամ՝ ի՞նչ ես արել:

Ոնց որ հելել էր, Գարսոն էնենց էլ պատմեց:

— Թաքավորի՛ ախճիկ, չընեղանաս, կարող ա, որ մե օր պետք գա, — ասավ Գարսոն:

— Շատ լավ ես արե, Գարսո՛ ջան, — ասավ Նոյեմզարը, — էս խրատները ոսկուց թանգ են, միտտ պախա՛: Էն բիձեն էրևում ա հասարակ բիձա չի հելել, անպաճառ Բափել ա հելել, Գարսո՛ ջան:

Գարսոն որ լսաց Բափելի անունը, ասավ. — Թաքավորի՛ ախճիկ, թե որ Բափել էր, փո՛ղ տուր, էթամ, էլի խելք սովրեմ:

— Գարսո՛ ջան, փողն էնտեղ ա, ինչքան ուզում ես, տար: Թե էն բիձեն խափեփա էր, էլի էնտեղ նստուկ կըհըլնի, թե Բափել էր, էլ չես տենա: Մեկ էլ, Գարսո՛ ջան, մենք մարթ ու կնիկ ենք, չուտով տարին կըթմի: Դու ընձի ասա՛, Նոյեմզա՛ր, ես էլ քեզի կասեմ Գարսեան: Անհարմար ա, որ ասես թաքավորի ախճիկ: Տան գլխավորը դու ես: Հարեանները որ լսան, կասեն, թե մարթը իրավունքից զրկված ա, կնիկն ա հրամայողը:

Գարսեանը ոսկին վերցուց, գնաց՝ ինչքան ման էկավ, ո՞նչ էն բիձեն կար, ո՞նչ էլ հուրիչ խող ծախող: Տեսան, որ հասարակ բիձա չէր, Բափել էր:

Մե ժամանակ, որ հընցավ, Նոյեմզարը ազատվավ, մե տղա բերեց: Ի՞նչ տղա, մե մարալ, սիրուն: Տղի անունը գրին Նվեր: «Աստուծու նվերն ա», — ասավ պառավ տատիկը: Ամբողճ օրը թոռին գրկած ման էր գալում, էլ թել էլ չէր մանում: Չէր թողում, որ թոռը մոր մոտ մնա, հիրա մոտ էր քնցնում:

Մե օթաղ չինեցին էրկու սենյակից, մեկի մեջ հիրանք ին, մեկի մեջն էլ պառավն էր քնում: Սերով, քախծը աբրում ին: Ուռուսը կիսուրին չատ էր սիրում: Կիսուրն էլ խառաին էր սիրում:

Էս ժամանակներում ըստոնց քաղաքը էկավ մե վաճառական: Թաքավորի ախճիկը մարթի խետ խորուրթ արավ ու հելավ գնաց վաճառականի մոտը:

— Վաճառական հայրիկ, — ասավ Նոյեմզարը, — էս 10 հազար մանեթը վերցրո՛ւ, մարթս խամ ա, տա՛ր առըսուրի, քեզի կըծառայի, դավեքը կըբառնա, բեռները կըհիչցնա, գիչերը պահակ կըկայնի, հախն էլ, ինչ կըտաս, տո՛ւ, էտի քո խխճից ա կախված,

մենք քո տվածից չնորակալ կըհըլնենք, ուզում ես, ըսկի հախ էլ մի տուր, թո էնենց ծառայի: Տարին որ թմմավ, իմ մարթին իրավո՛ւնք տու, գա տուն:

Վաճառականին շատ դուր էկավ կնգա խոսքերը, համաճայն-վավ, Գարսեանին վերցուց ու շարունակեց ճամփեն: Գարսեանը շատ լավ ծառայեց, վաճառականին շատ դուր էկավ, ջանով-դուր-բանով էր խետը խոսում: Մնացածները նախանձում ին, որ էս նոր մարթին վաճառականը հավելի ա սիրում, քանց թե հիրանցը: Իրեք ամիս ճամփա գացին սարերով, դաշտերով, վերչ մտան մե անա-պատ: Քանի աչկտ կդրում ա, ավազ ա: Մե իզ ա էրեւում, էն էլ շատ տեղ ավազը էկեր ա, ծասկեր ա:

Թո ըստոնք էթան, հիմի մենք խառցնենք Նոյեմզարից:

Գարսեանի գնալուց ետո Նոյեմզարը կիսուրին ասավ.—Մայ-րի՛կ, Գարսեանը տանը չի: Մե կնիկ, որ մարթ չունի, յա մարթը տանը չի, հազար մարթ էտ կնգան աչկ ա դնում, իրավո՛ւնք տու, ես տղամարթի չոր խաքնեմ, մինչևի Գարսեանի գալը:

—Նոյեմզա՛ր ջան, ես քո ոտի խոզն հըլնեմ, ոնց որ ուզում ես, էնե՛նց արա: Քո արածին ես անուն չեմ դնի:

Նոյեմզարը գիշերը կնգա չոր էր խաքնում, կիսուրի խետ թել մանում, թաթ գործում, ցերեկը յա դուս էչը էթում, յա թե էթում էր՝ տղամարթի չորերով: Մե տարվա մեչ խառս ու կիսուր շատ փող աչխատին: Նոյեմզարը պառավին սաղրի սղեր առավ, լավ-լավ, ջուռա-ջուռա չորեր առավ, տղին չոր ու խաղալիքներ առավ: Ուրախ արբում ին, մինակ մտածոնքները Գարսեանի մասին էր:

Նոյեմզարը մե կնիկ էլ բռնեց, որ պառավին ծառայի: Պառավ Հայկոն դարցել էր Հայկանուշ խանրմ: էս ծառան թունդիրն էր վա-ռում, խմորն էր անում, խաց էր անում, ճաշ էփում, ըստե ուտում-խմում, էթում հիրա տունը քնում էր: Շատ անքամ էլ էրեխեքին ուտելիք էր տանում:

Պառավը մե օր էլ Նոյեմզարին խառցրեց.—Նոյեմզա՛ր ջան, քո խերը հընչի կնիկ չի առնում:

—Ես ի՞նչ հիմանամ, մայրի՛կ, հընչի՞ ես խառցնում:

—Հենց էնենց միտս հընգավ: Քանի՞ տարեկան ա:

—Հիսուններկու տարեկան ա:

—Ես 48 եմ, 4 տարով մեծ ա:

Նոյեմզարը պառավի միտքը խասկըցավ, հըմա բան չասավ:

Թող պառավը թաքուհի դառնալու մասին մտածա, խառսը՝ Գարսեանի, մենք էլ էթանք Գարսեանի իզով, տենանք՝ ի՞նչ հե-լան: Անապատով գացին, գացին, խասան մե ջրխորի: Վաճառա-կանը էս ճամփով շատ էր գնացել-էկել, ամեն ինչին ծանոթ էր,

Հրճա ձեռի ծառայողները ջրխորի գաղտնիքին ծանոթ չին։ Ծառավուծյունից հիրանք էլ են թուլցե, դավեքն էլ։ Վաճառականը վիրն ասում ա՝ մտե՛ք ջրխորը, չեն մտնում։ Գարսեանին չի ասում, հիմանում ա, որ էտ ջրխորը մտնողն էլ դուս չի գա։ Գասպարը տեսավ, որ մտնող չըկա, ասավ, որ հինքը կըմտնի, չի վախենում, թոկը մեջքից կըկապեն, հինքը ոտները կըղնի նարդվաններին, կըհիչնի, հետո էլ թոկը կըկապա հիրա մեշկից, նարդվաններով դուս կըգա, թե բան ա, ոտը կըծա, թոկով կըքաչեն, կըխանեն։

—Դե որ չես վախենում,—ասավ վաճառականը,—մտի՛ր, ես քեզի գողով չեմ մտցնում ջրխորը։

Թոկը էրկու տակ կապին մեշկը, իրեք-չորս մարթ բռնին, Գարսեանը մտավ։ Քառասուն գյազ հիչավ, խասավ ջրին։ Մեշկից թոկը հարցակեց ու ձեն տվեց։

—Տիկերն ու վեղրոները կախեք գա։

Սկսեցին ջուրը խանել։ Դավեքը ջրին, հիրանք խման, լվացվան, ջրի պաշար վերցին, թոկը կախին, որ Գարսեանը դուս գա։

Հենց էտ ժամանակ Գարսեանը հիշկաց կողը-կուշտը, տեսավ ջրխորի կողին նիշ ա փորուկ։ Էս նիշի մեջը նստուկ են մե խորոտ ախճիկ ու մե գորտ։

Գարսեանի Հընգերները վիրեից ձեն են տալում.—Գարսեա՛ն, Գարսեա՛ն, թոկը կապա՛ մեշկտ, քաչենք։

Գարսեանը տարվեր ա ախճկանով ու գորտով, չչմեր ա, բան չի լսում, ըշկը մացեր ա ըտոնց վրեն։

Վիրեից շատ սպասեցին, ձեն տվին, պատասխան չըստացան, թողին գացին։

Ախճիկը Գարսեանին ասավ.—Ասա տենամ, ե՞ս եմ խորոտ, թե՞ էս գորտը։

Գարսեանն ասավ.—Քո՛ւր ջան, Աստու ստեղծածները բոլորը խորոտ են, Աստված վատ ու գեշ չի ստեղծում։

Էս որ ասավ, գորտը ուռավ փքվավ, որ հինքը խորոտ ա։ Էնքան ուռավ, որ տրաքվավ, մեշից մե տղա դուս էկավ։ Օղորթ որ խորոտ, մե իշխան տղա։ Գորտը որ տղա դարցավ, ախճկա խետ փաթըթվան հիրար։

10-15 Հրոպե հետո անջաղ հիրանց կարոտն առան, ետո տղեն դարցավ Գարսեանի յանը ու ասավ.—Ես Ֆռանգստանի թաքավորի տղեն եմ, էս էլ իմ սիրածն ա, մե հասարակ գեղացու ախճիկ ա։ Որսի գնալու ժամանակը մե հախպրի մոտ հանդիպանք։ Ջուր ուզի, տվեց։ Սիրտս կպավ էս ախճկան, խոսք տվի, որ հիրանից սավայի հուրիչի չեմ ուզի։ Ո՞րոս ու մորս ասի, Հրճա ընդոնք համաձայն չըհեկան. «Ես երգրի թաքավորն Հըլնեմ, էթամ մե քյասիր գեղացու

խնամի՞ դառնամ: Բա հուրիչ թաքավորները, իմ երգրի իշխանները ընձի ի՞նչ կասեն, չեն ասի՞, թե մեր ախճիկների անունը հրնչի՞ կողրիր, գացիր մե գեղացու անհուսում ախճիկ ուզիր: Կարող ա պատահի, որ հուրիչ թաքավորները դոչուն կապեն, գան, յա թե իմ իշխաններն ապստամբեն, էտ բանը գլոխ գալիլ բան չի, մտքիցդ խա՛ն, ես համաձայն չեմ»,—ասավ հերս:

Դե որ դու ըտուրը համաձայն չես, հայրի՛կ, ես էլ խոսք եմ տվե, իմ խոսքից ետ դարցողը չեմ: Թողեցի ու գացի իմ օթաղը: Հորքուրս կախարթ էր, թաքավորի հրամանով հորքուրս ընձի գորտ շինեց, էս ախճկա խետ բերին քցին էս խորը: էս օխտը տարի ա, արևի հերես չենք տեսն: Աստուց մանանա ա հիչնում, արբում ենք ու սպասում մեր ազատողին: Դու հեյար մեր ազատողը, մեզի փրգելու համար քո լավության տակից դուս կրգանք:

Տղեն որ խոսքը վերչացուց, ախճիկն սկսեց.—Կախարթ հորքուրը մեզի որ էստեղ բերեց, էս տղին գորտ շինեց, ուզում էր էթա: Կախարթի սրտով էլ չէր, որ էտենց անա, ինչքան չըհընի, ախպոր տղեն ա, իսկ ախպոր տղեն քախժր ա, ես ասի. «Ոորքո՛ւր ջան, դու ստիպված թաքավորի հրամանով էտենց արիր, բան չըկա, հըմա մի ճար էլ արա, որ դուս գանք»: Հորքուրը տվեց էս իրեք նուռը, ասավ՝ կըտաս ձեզի ազատողին: Ձեզի կազատա էն տղեն, որ քեզի «քուր» ասա: էս օխտը տարի հարուր մարթ ա մտե ըստե, ուզեցեր ա ընձի ձեռ քցա, ասեր ա՛ էս գորտի մոտ մի՛ մաց: Հըմա ձեռ ա քցե, դարցեր ա մե պստի քար, հիչեր ա ջրի տակը: Ընդոնք հիրանց վատության փոխարեն պատիժ ստացել են, մենք էլ հընենք էթանք:

—Ձէ՛,—ասավ Գարսևանը,—առանց էս տղերքին ազատելու՝ խորից դուս չեմ գա, ասեք տենանք, ո՞նց ազատենք, որ էլի տղա դառնան, էթան հիրանց տուն ու տեղին, կնիկ-ճժին, բոլորն էլ ախկատի տղա են, հարուստներն ըստե չեն մտնի: Ստիպված մտել են, մե սխալ են կատարել, օխտը տարով պատժվել են: Հիմի որ ըստոնցը թողեմ, էթամ, չեմ կանա քնի, կրգան աչկիս հառեչը: Դուք գացեք, ես կըմնամ:

Ախճիկը տեսավ, որ Գարսևանը հաստատ վճռել ա, ասավ.—Ըտոնք դարցել են լիժո քար, հենց որ դուս գան ջրի հերեսը, կըդառնան մարթ, հըմա ո՞նց խանենք:

—Ես կըմտնեմ ջուրը, տենամ՝ ինչքան ա,—ասավ ու չորերը խանեց, մե տոռսիկով թռավ ջուրը: Ջուրը խասավ վզից: Քարերը մեկ-մեկ քթավ, խանեց-չպրտեց նիչը, դարցան մարթ ու սկսեցին նարդիվանով շարվելով հիրար հետևից բանցրնալ:

Գարսևանը շատ ման էկավ, տեսավ՝ էլ քար չըկա, դուս էկավ, չորերը խաքավ, ջրխորից հելան: էս տղերքը շատ ամանչան հի-

րանց արածից, ներողութիւն խնթրական, գլխները կախին, կայ-
նան: Ախճիկը Գարսեանին տվեց իրեք նուռ, ասավ, որ ըստոնց
խետ հղրկա տուն:

Ըտոնցից էրկուսը Գարսեանենց քաղաքից ին, նոնները տվեց,
ասավ.—Առաչինը, որ երգրացի ենք, երգրորթը, որ էլ չեմ կար-
ծում, թե վատ բան անեք, էս նոնները կըտանեք, էս ինչ հասցեով
մեր տունը, կըքթնեք, կըտաք կնգաս, յա թե մորս: Հետո ես կըգամ,
ձեզի կըվարձատրեմ:

—Էսի մեր հասցեն, —ասին ըտոնը, —Հըմա դու չատ ես վար-
ձատրե, մեզի փրգեր ես, քեզանից բան չենք ուզում, հըլա մենք ենք
քեզի պարտական, նոնները կըտանենք կըտանք:

—Դե գացեք ձեր տները: Ըստուցը ետը հուրիչի կնգա, ախճկա,
աբրանքի, աչկ չըղենք: Էս իրեք ոսկին էլ ձեզի ճամփի ծախս, դե
գացե՛ք:

Էկան ճամփի կեսը մե հընգերն ասավ.—Բեր նոններից մեկն ու-
տենք: Թո գա բողոքա, տասը կառնենք, կըտանք, հո ըտու խըմար
մեզի չեն կախի:

—Քեզի էտ բանի խըմար հիմի էն ծառից կըկախեմ: Տո մու-
խաննա՛թ, հըլա չե՞ս խրատվե, մի նուռն ի՞նչ ա, որ ուզում ես ու-
տել: Բա չասա՞վ՝ հուրիչի աբրանքին ձեռ չըտաք:

—Լա՛վ, լա՛վ, մի՛ նեղացի, քեզիկ ի փորցում:

—Քեզի՛ փորցա, ընձի փորցել պետք չի:

Էս տղերքը բերին, նոնները տվին Գարսեանի մորը:

Հիրկվան յանը Նոյեմզարը տուն էկավ, կիսուրը նոնները տվեց
խառսին, ասավ.—Գարսեանս ա հղրկե, կղրա՛, ուտենք:

Կղրեցին, ի՞նչ նուռ: Շափաղաթ թանգագին քարերը՝ հազար
գույնի, լցվան ստղի վրեն, տունը դարցավ չրաղվան: Մացին զարմա-
ցած:

Հայկանուչ խանըմի խետ խորուրթ արին, որ էրկու նուռը պա-
խեն մինչև Գարսեանի գալը, էս մեկի թանգագին քարերը խուր-
դեն, նոր տուն շինեն: Քարերը տարավ վաճառականների մոտ:
Վաճառականները որ տեսան, խելքները գնաց:

—Մենք ըստոնց գինը չենք կանա տա, թե տա, թաքավորը
տա, —ասին ըտոնը:

—Տարեք թաքավորի մոտ խուրդե՛ք, ես ձեր վարձը կը-
տամ, —ասավ Նոյեմզարը, —ես թաքավորից խոռվել եմ:

Տարան խուրդին, 1500 թուման բերին: 500 թուման տվեց վաճա-
ռականներին, մնացածը վերցրեց: Վարպետներ ու բանվորներ բե-
րեց, մե խատ օխտը հարգանե պալատ շինեց մինչև Գարսեանի գալը:

Հիմի խոսանք Գարսեանից:

Ֆուսանգստանի թաքավորի տղեն ու Գարսևանը հիրար հասցե տվին, չնորակալ հելան ու բաժանվան: Գարսևանը վազավ, խասավ քարվանին: Վաճառականը, որ տեսավ, զարմացավ, աստվորով մեկ հելավ, հըմա էրկուսով էլ բան չըխոսացին, ճամփեն չարունակեցին: Գացին, խասան մե քաղաքի մոտ, էն ա պտի քաղաքը մտնեն, երեսուն ձիավոր էկան, ճամփեն փակին:

—Քարվան դարցրե՛ք թրա սարը:

«էս ըստոնք ավազակ են»,—մտածեց վաճառականը, ասավ.—Տղե՛րք ջան, մենք էս երգրացի չենք, թողեք էթանք:

Ըստոնցից մեկը վաճառականին թրով տվեց, յարալու արավ ու քցեց: էս որ Գարսևանը տեսավ, ձեռի փետով տվեց էտ մարթին ձիանից քցեց:

Ձիանից քցեց, մե խատ էլ չոմախով գլխին տվեց, ձիավորը մնաց պարկուկ: Մնացած ավազակները յարալուներին վերցին, քարվանը քչին թրա սարը: Քարվանի մնացած մարթիք վախից ձեն չարին: Լուրը խասավ քաղաքագլխին: Քաղաքագլուխը 100 մարթ հղրկեց: Ավազակներին կոտորին, էս մարթկանց բերին, լավ հեքիմ կանչին, վերքերը կապին, միյուս օրը ճամփու դրին: Անվնաս տեղ խասնելու համար մե քանի զինված մարթ դրին խետները մինչև հիրանց սայմանի վերչը:

Որ խասան սայմանի վերչը, վաճառականը ըստոնցը պարքևատրեց, ետ հղրկեց, հիրանք գացին: Ոսանելով նոր քաղաքը, փորցանքից ազատվելով՝ ըստոնք մե ամիս լավ հանգստացան, առըտուր արին ու ետ դարցան թրա Գարսևանենց քաղաքը: Վաճառականը մե քանի տեղ Գարսևանի փողը օքտագործեց և մեկը շինեց խինգ:

Քարավանը տեղ խասավ մե ամիս հուշացումով: Գարսևանի կնիկը շատ անհանգիստ էր: «Ի՞նչ պատահավ, ավազակների ձեռք հընգա՞ն, տենաս՝ Գարսևանը սա՞ղ ա, թե՞ մեռուկ»:

Մե օր էլ կիսուրին ասավ.—Մայրի՛կ, Գարսևանն հուշանում ա, ես պտի էթամ ման գամ, քթնեմ, իրավունք տուր էթամ, իմ տղեն էլ քեզի ամանաթ:

—Գնա՛, Նոյեմզա՛ր ջան, գնա՛, տղես կորավ, վաճառականը սպանել տվեց, որ փողերը հիրանը մնա, էս ի՞նչ օյին էր՝ էկավ իմ խեխճ ու միսուճար Գարսևանի գլուխը:

Նոյեմզարը թուրը կապեց, խեձավ ձինը, գնաց: Մինչև կեսօրին գնաց, տեսավ՝ ճամփի էն մեկէլ յանից թող ա էրևում: Գնաց, գնաց, տեսավ՝ էտ վաճառականի քարավանն ա գալում: Հինքը ճանչըցավ, հըմա ըտոնք չըճանցան: Դե ի՞նչ հիմանան, թե կնիկը թուրը կրկապա, ձի կրխեձնի, մինակ ճամփա կէթա:

Որ խասավ վաճառականին, ասավ.—Բազրգյա՛ն ախպեր, ես էլ վաճառական եմ, հըմա փորցանքի մեջ հընգա: Հընգերներս դավաճանեցին, ես փախա ազատվա, քո գո՞րծը ոնց ա:

—Այ է՛ն տղին տենում ես (նշանց տվեց Գարսևանին), քաջ, մաքուր, ազնիվ տղա ա: Ես էլ փորցանքի մեջ հընգա: Իմ ազատողն էտ տղեն ա: Հէսօր կըխասենք ըտոնց քաղաքը, ըտու կնգան թանգագին նվերներ եմ առե, կըտամ ու կըպատմեմ հիրա մարթի քաջության մասին: Կնիկը շատ խելոք կնիկ ա, փող տվեց, որ առըտուր անեմ, հիրան տված փողն էլ մե տարվա մեջ խինգ անքամ հավլցրել եմ: Էս տղին էլ սաղ-սալամաթ տամ հիրա կնգան ու մորը, ես էլ էթամ իմ տունը: Վաճառականի գլխին շատ փորցանք ա գալում, ունեցածս ընձի, իմ թոռներին բոլ ա:

Մնաս բարով ասին: Նոյեմզարը գնաց սարի հետևը, ճամփեն ծոցեց, էկավ տուն, կիսուրին ասավ, որ «տենող ա հելե, հէսօր-հէքուց կըգան»:

Նոյեմզարն ու կիսուրը սկսին պաղրաստություն տենալ, որ Գարսևանին ընթունեն:

—Հայլիկը կըգա՞, —խարցնում ա տղեն:

—Կըգա, կըգա, —պատասխանում ա պառավը:

Էս քարվանը էկավ քաղաքի մոտ, մե վերս ա մացե, արևը մտավ: Գարսևանն ասավ.—Վաճառկա՛ն, դու էթում ես, գնա, ես մնում եմ, Բափելի ասածը չեմ մերժի:

—Ա՛յ Գարսևան, ի՞նչ Բափել, ըստե վտանգավոր ա, մտնենք քաղաք, ուզո՞ւմ ես էթանք քո տունը, ուզո՞ւմ ես քարվանսարեն:

—Ձէ՛ որ չէ՛, ես ըստե կըմնամ:

Վաճառկանը չուզեց խաթրը կողրա, չաղրներ խփին, բեռները թափին, նստան:

Գարսևանն ասավ.—Դուք բոլորտ քնեք, ես կըկայնեմ պահակ: Բոլորը ուրախացան, պարկան քնան:

Սաղ գիշերը Գարսևանն աչկ չըկպցուց, գնաց, էկավ: Էնքան ոտի վրա մնաց, ոտները թմբեր ին, հըմա մե քչերն ի՞նչ ա, որ մարթ չըղիմանա: Քչերվա կեսին տեսավ, որ մե կնիկ՝ ձեռին մե բան, մոտցավ դավի բեռին, բացեց, մե բան դրեց ու ետ դարցավ: Ուզեց փախնի, Գարսևանը թևից բռնեց: Հաստատ համոզվավ, որ կնիկ ա, բան չասավ, ծամերից մեկը կղրեց, հիրանն ասավ՝ գնա:

Ախճիկը գնաց: Գարսևանի քունը փախավ: Ձէր հընցե կես սհաթ, մեկ էլ տեսավ՝ մոտ հարուր ձիավոր քարվանը չըջապատեց: Քնից բոլորը վեր թռան: Վաճառկանը, որ հարցակման հեջ էէր սպասում, զարմացավ: «Ո՞նց կարող ա, որ քաղաքին էսքան

մոտ ավազակաբուն հըլնի»: Հարցակվողներն սկսեցին գոռգոռալ, հայհոյել, բեռները քանդել, արբանքը ոտի տակ տրորել:

—Մի՛ քանդեք, ասեք, տենամ ի՞նչ եք կորցրել, ինչի՞ եք ման գալում,—ասավ Գարսևանը:

—Տո ավազա՛կ մարթասպաններ, դուք վաճառակա՞ն եք, թե՞ մարթասպան: Հընչի՞ թաքավորի տղին սպանիք:

—Մենք ոնչ մեկի չենք սպանե, ի՞նչ եք ասում, մենք առըտուրի մարթ ենք, սպանելը ավազակի գործ ա,—ասավ վաճառականը,—մեզի հանգի՛ստ թողեք:

—Հա՞, մարթասպա՞ն չեք, հիմի կըպարզենք,—ասավ խմբի հրամանատարը ու հրամայեց բոլոր բեռները քանդել, մանդրամասն ստուգել:

—Մի՛ քանդեք,—ասավ Գարսևանը,—ձեր կորցրածն էստեղ ա, էկեք էս բեռան մոտը:

Տարավ բեռի գլխին կայնցուց: Արնաթաթախ գլոխը խանին:

—Մարթասպան չե՞ք,—խմբի մեծն ասավ վաճառականին ու հրամայեց բոլորի ձեռները կապեն հետևից, քարավանն էլ քչեն ուղիղ թաքավորի պալատը:

Վաճառականի լիզուն բռնվեց ա, չի կանում խոսա, մինակ կանում ա լն ու վայմն ասա:

Գիչեքվա կեսին թաքավորի պալատի դռները տփին: Թաքավորը բանից բեխաբար ա, ձենը լսելով, շորերն խաքավ, թուրը վերցուց, դուռ էկավ:

Որ ըստոնց ներս արին բակը, վազիրի տղեն մոտըցավ թաքավորին ու ասավ. —Թաքավո՛րն ապրած կենա, էս ավազակները Բալթազարին սպանեցին, գլոխն էլ բեռի մեջ դրել տանում ին, ճամփի կեսին հարուր ձիավորով խասա բռնի, ետ դարցրի, հիմի սպասում եմ քո հրամանին:

Կասես թաքավորի գլխին ջուր մաղվավ, որ հիմացավ տղի սպանվելը, թևերը թուլցան, թուրն հընգավ:

—Դատաստա՛ն արա, թաքավո՛ր, դատաստա՛ն, Բալթազարի արունը վրեժ ա պահանջում, հրաման տուր էս սհաթին բոլորի գլոխը թոցնեմ,—ասավ վազիրի տղեն:

—Ձե՛,՛ վազիրի՛ տղա, էստեղ մե անհասկանալի ու մութ բան կա, գործը ես կըքննեմ: Ձեմ կարծում, որ հուրիչ երգրի վաճառական գամեր երգիրը ու իմ տղին սպանա: Անմեղ տեղը արուն չեն թափի:

Հրամայեց, որ պալատի պահակները վաճառականներին հսկեն, իսկ վազիրի տղեն էթա, քաղաքի կարք ու կանոնին հետևա: Վազիրի տղեն խումբն առավ, գնաց:

Ըտոնք որ գացին, Թաքավորն ասավ.—Բերե՛ք վաճառականին:
Վաճառականը՝ ո՛նչ մեռուկ, ո՛նչ սաղ, կայնավ Թաքավորի հա-
ռեչը դողում ա, լիզուն բռնվեր ա:

Գարսևանն ասավ.—Թաքավո՛րն ապրած կենա, էտ պատվելի
վաճառականի Թևերն հարցակեք, Թե մեղավոր եմ, ես եմ մեղավոր,
վաճառականը, միյուս հընգերներս բանից խաբար չեն և չեն կանա
բան ասի, գործին մինակ ես եմ տեղյակ, կղրելու ա, իմ գլխը կղրե՛լ
տվեք, էս անմեղներին թողեք:

—Դե խոսա՛, —ասավ Թաքավորը:

—Թաքավո՛ր, —ասավ Գարսևանը, —հրամա՛ն տուր, թո էսօր
քաղաքին դուժուրնով լծյուն անա հուրիչ գորք, հըմա էն խումբը որ
մեզի բերեց, զինաթա՛փ արա, էս սպանությունը կատարողը իմ
կարծիքով ըտոնք են:

—Փաստ ունե՞ս, —ասավ Թաքավորը:

—Ունեմ, Թաքավո՛ր, ունեմ:

Թաքավորը հրամայեց վազիրի տղին, հիրա խմբով ետ բերեն և
զինաթափ անեն, հսկողություն տակ պախեն, մինչև գործի քննելը
վերջանա:

Արթեն լուսը բացվում էր:

—Ունես, դե փաստերտ նշա՛նց տուր, յա ասա՛:

—Թաքավո՛ր, ընձի առանցի՛ն քննա, որ լսող չըհըլնի:

Թաքավորը Գարսևանին տարավ կաբինետը:

—Դե ասա՛, հոքիս խանեցիր:

Գարսևանը ծոցից խանեց մազերը ու ասավ.—Ես ի պահակը,
բոլորը քնուկ ին: Գիչերվա կեսին էս մազերի տերը գլխը բերեց,
դրեց բեռի մեչը: Տեսա, որ ախճիկ ա, բան չասի, մազերի էս փունջը
կղրի, հիրանը բաց թողի: Կես սհաթից ետո էտ խումբը էկավ ու
Թաքավորի տղի գլխն ա ուզում: էս մազերի տիրոջ ու էտ խմբի
մեչ մե կապ կա, դու քթի՛, իսկ իմ հընգերներին քննելու կարիք չը-
կա, ոնչ մե բանից խաբար չեն, բոլորը քնած ին:

—Ո՞նց գտնենք մազերի տիրոջը:

—Հրամա՛ն տուր, 10 տարեկանից մինչև 40 տարեկան բոլոր
ախճիկները գան, ստուգենք:

Շատերն էկան, ստուգեցին: Ջրկա:

—Վազիր՛, —ասավ Թաքավորը, —քո ախճիկը չէ էրևում:

—Թաքավո՛ր, իմ ախճիկը խիվանդ ա:

—Գնացեք բերե՛ք, —ասավ Թաքավորը:

Վազիրի ախճկան բերին: Գլխը փաթըթեր ա, գույնը քցեր ա,
մեռելի գույն ա ստացե:

—Ախճի՛կ ջան, —ասավ թաքավորը, —տենում եմ, որ չատ խի-վանդ ես, մե հրոպե գլոխտ բաց տենանք ու գնա՛:

Գլոխը բացին: Տեսան, որ մե յանի մագերը կղրուկ ա: Էս ծամե-րը դրին տեղը: Իսկականն ա:

—Դե, հանցավորը բռնվավ, —ասավ թաքավորը, —մնացած-ները էթան հիրանց տները:

—Հիմի ի՞նչ կասես, վազի՛ր, —ասավ թաքավորը:

Վազիրը ձեն չարավ:

Թաքավորը հրաման տվեց վազիրին բանդարկել:

Վազիրի ախճիկն էտ ժամանակ ասավ. —Թաքավո՛ր, մագերն իմն են, ես էլ եմ մասնակցել սպանությունը, հրձա սպանողներն հուրիչ են: Ինչ վերաբերում ա մագերը կղրելուն, էս տղեն ա կղրե, հընգերներից ոնչ մեկը ընձի չի տեսե:

—Դե պատմա՛, պատմա՛ մանդրամասը, —ասավ թաքավորը:

—Ես սիրում ի Բալթազարին, հրձա Բալթազարն իմ վրեն հեչ ուշադություն չէր դարցնում: Իմ ախպերը ու վաքիլի տղեն խոսքը մեկ արին, որ Բալթազարին ու քեզի սպանեն, իմ ախպերը դառ-նա թաքավոր, վաքիլի տղեն՝ վազիր, ընձի էլ տան վաքիլի տղին, ես դառնամ վազրի կնիկ: Էտ որոշումն անելուց ետո խմբից գախտնի էրկուսով Բալթազարին սպանին, գլոխը տվին ընձի, ասին. «Տար դի՛ր բազիրգանի բեռներից մեկի մեչը»: Տարա դրի, ետ դարցա, որ փախնեմ, էս տղեն բռնեց, մագերս կղրեց, ասավ՝ դե գնա՛: Էս ա պատմությունը. մեղավորը մենք իրեքով ենք:

Էս պատմությունը, որ թաքավորը լսաց, ասավ. —Վազիրի ու վաքիլի տղին բերե՛ք, մնացածներին բա՛ց թողեք, թո էթան: Վա-զիրի՛ն էլ բերեք:

Բերին:

Թաքավորն ասավ. —Վազիրի՛ ախճիկ, խոսքերտ կրկնի՛:

Ոնց որ պատմել էր, նորից պատմեց:

Թաքավորը հրաման տվեց վազիրին, վաքիլին ու հիրանց տղեր-քին կախեն, որ թաքավորություն էլ աչկ դնող չըհըլնի: Ժողովրթին հավաքին, հայդարարին ու կախին:

Թաքավորը վաճառականին իրավունք տվեց ազատ առտտուր անա, ոնց որ սիրտն ա ուզում, իսկ Գարսևանին էլ պարքևատրեց ոսկով:

Ըստոնցը որ թողին, գացին Գարսևանի տան յանը: Տեսան Գարսևանի տան տեղը մե պալատ ա շինուկ, երգրորթ հարգի բալ-կոնում էլ մե երիտասարթ ման ա գալում:

—Հա՛յ-Հա՛յ, —ասավ Գարսևանը, —ես գացեր եմ օտարություն, էս մարթը մորս, կնգաս, տղիս վոնդեր ա, պալատ ա շինե, աբրում ա:

Վաճառականի խետ ետ դարցան թբա պալատը:

—Թաքավոր, դու էլ չըհըլնես, քո թաքավորութունն էլ, քո երգրում կարք ու կանոն չըկա՞: Տղիտ սպանում են, աղքատների տունը խլում, հիրանց խըմար պալատ կառուցում, փառավոր արբում, դա՛տ արա, թե չէ ես իմ ձեռով դատ կանեմ, իմ գլխն էլ կղրա՛, ըստուց ետո արբելը պետք չի:

—Պա՛րզ ասա, ա՛յ տղա, բան չըխասկցա:

Գարսեանը պատմեց, որ մե երիտասարթ մոր ու կնգա ձեռից տունը խլել ա, պալատ ա կառուցե, էս հրոպեին էլ բալկոնումը ման ա գալում: Հրաման տվեցին, գացին էտ երիտասարթին բերին:

Թաքավորը ջղայնացած ասավ. —Դո՞ւ ես պալատի տերը:

—Ես եմ:

—Հո՞ւր են էս տղի մերը, կնիկը, տղեն:

—Մերն ու տղեն տանն են, կնիկն էլ, —ասին, —գնաց թաքավորի պալատի յանը:

Թաքավորն հրաման տվեց, գնացին պառավին ու թոռին բերին: Պառավը սաղրի սոլերն էր խաքե, թաղա չալը քցե, որ թաքավորին դուր գա: Թոռի ձեռից բռնեց, կայնավ թաքավորի հառեչը:

—Պառա՛վ, որտե՞ղ ես արբում, —ասավ թաքավորը:

—Մեր տան մեչ, որտե՞ղ:

—Հո՞ւր ա խարստ:

—Աչկերտ քոռնա՛, թաքավոր, քո ախճկան չե՞ս ճանչնում, բա էս կայնողը ո՞րն ա:

Ուարսը ժպտաց. —Էս կայնողը տղամարթ ա, պալատի տերն ա:

—Պալատի տերն ա, հըմա տղամարթ չի, կնիկ ա, իմ էլ խարսն ա: Էսի էն ախճիկն ա, որ ասավ՝ տուն չինողը կնիկն ա, դու դուս արիր: Էտ տունը խարսս ա չինե, հըմա քո լավ փեսեքը տղիտ են սպանե: Էս էլ իմ Գարսեանն ա, վա՛յ, մերտ քեզի մատաղ, Գարսեա՛ն ջան:

Թաքավորը ախճկա ճակատը պաչեց, ասավ. —Գնացեք հանգստացե՛ք, ետո կըխոսանք:

Գացին Գարսեանի տունը: Վաճառականին մե չափաթ դոնաղ պախին: Ֆռանգստանի թաքավորն էլ մեռնելու ժամանակ հրաման տվեց տղին քթնեն: Տղեն ու խարսը գացեր ին մե քաղաք, հիրանց խըմար արբում ին: Որ հիմացան, թե թաքավորը փոշմաներ ա, ուզում ա, որ տղեն գա, թաքավոր դառնա, կնգա խետ հելան էկան թաքավորանիստ քաղաքը: Էրկու ամիս էր, որ կնգա խետ ամուսնացեր էր: Թաքավորը սիրով ընթոնեց և գահը հանձնեց տղին:

Բոլորն էլ խասան հիրանց մուրազին, դուք էլ խասանք ձեր մուրազին: